ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Նորին Սրբութեան Վեհափառ Կաթուղիկոսի հեռագիրը Վսեմափայլ Տ. Պօղոս Նուբար փաշային յունվար 29-ին 1914 թիւ.

«Paris, 12, Avenue du Trocadero. *Իմ շնորհակալութիւնս Ձերդ Վսեմափայլութեան Ձեր եռանդուն գործունէութեան համար Տաճկաստանում բարենորոգումներ մըտցնելու առթիւ։ Բախտաւոր եմ՝ որ մեր եղբայրների գործը յաջողութեամբ է առաջ ընթանում. հայցում եմ Աստուծոյ օրհնութիւնը Ձեր և Ձեր ընտանեաց համար»։*

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Այս հեռագիրն պատասխան է Վեհափառ Կաթուղիկոսի նոյն օրը Փարիզից Վսեմ. Տ. Պօղոս Նուբար փաշայից ստացած հետևեալ հեռագրի։

«*Բախտաւոր եմ մատուցանել Ձերդ Սրբութեան ակնածալիր շնորհաւորութիւններ Հայաստանի բարենորոգութիւնների համար բարեյաջող համաձայնութեան գալու առթիւ։* ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍԵՐ *կառավարութեան եռանդուն գործունէութեան և Ձեր իմաստուն հեռատեսութեան, բարձր ցուցումների շնորհիւ։ Մեր Ասիական Թուրքիայի եղբայրներն այսուհետև հնարաւորութիւն կ՝ունենան ապրելու արդարադատ և ապահով վարչութեան ներքոյ»։*

ՆՈՒԲԱՐ